

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	3
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	4
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	5
4. ՓՈԽԱՐԺԵՔ	6
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	7
5.1. Բյուջեի եկամուտներ	7
5.2. Բյուջեի ծախսեր	8
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	9
5.4. Պետական պարտք	10
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	10
6.1. Գնաճ	10
6.2. Ավանդներ և վարկեր	11
7. ԱՄՓՈՓՈՒՄ	12

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2020 թվականը սկսվել է բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշով, որը, սակայն, առավելապես բազային էֆեկտի հաշվին է գրանցվել, ինչին կանդրադառնանք ստորև:

2020թ. հունվարին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 8.9%, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 3.1 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության ցուցանիշին կրկին հիմնական նպաստումն է ունեցել ծառայությունների աճը՝ 5.6 տոկոսային կետով: Արդյունաբերությունը, առևտուրը և շինարարությունը նույնպես ունեցել են դրական նպաստում՝ համապատասխանաբար 2.5, 1.2 և 0.5 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության ոլորտի խնդիրները, ըստ երևույթին, շարունակվելու են այս տարի: 2020թ. հունվարին գյուղատնտեսության աճի ցուցանիշը չի հրապարակվել, սակայն մյուս ճյուղերի նպաստումներից կարելի է ենթադրել, որ գյուղատնտեսության նպաստումը բացասական է (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները¹, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի բարձր աճը պայմանավորված է հանքարդյունաբերության վերականգնմամբ: Պետք է նշել, որ նախորդ տարվա հունվարին Թեղուտի հանքը չէր աշխատում, հետևաբար հանքարդյունաբերությունը մեծ չափով անկում էր գրանցել: Սակայն, 2019-ի

¹ Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

ամռանից Թեղուտի հանքը սկսեց շահագործվել, ինչն օգնեց վերականգնել արդյունաբերության աճի տեմպը: Այս «բազայի էֆեկտի» արդյունքում, 2020-ի հունվարին արդյունաբերության աճը կազմել է 13.4 տոկոս:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



2020թ. հունվարին շինարարության ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 7.7 տոկոսով, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ցածր է 14.4 տոկոսային կետով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը դանդաղել է: Մի քանի տարի շարունակ ծառայությունները հանդիսանում էին տնտեսության ամենաարագ աճող ճյուղը, սակայն 2019թ. հունվարին ծառայությունների աճը զիջել է արդյունաբերության աճին՝ կազմելով 13.2%: Սակայն, պետք է հաշվի առնել, որ արդյունաբերության բարձր աճը պայմանավորված է ցածր բազայի հետ (նախորդ տարվա հունվարին

հանքարդյունաբերությունը անկում էր ապրում): Մինչդեռ, ծառայությունների ոլորտը, նախորդ տարվա 16.5 տոկոս աճից հետո աճել է 13.2 տոկոսով:

Հետևաբար, դեռևս վաղ է ոգևորվել արդյունաբերության բարձր աճով, քանի որ տարվա ընթացքում աճի տեմպը կարող է դանդաղել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալների աճի տեմպը նույնպես դանդաղել է: 2020թ. հունվարին առևտրի ոլորտի կուտակային աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 10.3 տոկոս, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից փոքր է 9 տոկոսային կետով:


2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման աճը 2020թ. հունվարին հիմնված է եղել հանքարդյունաբերության աճի վրա: Արտահանման աճի արագացումը առավելապես կապված է նախորդ տարվա արտահանման ծավալների նվազման (ցածր բազայի) հետ: 2020թ. հունվարին արտահանումն աճել է 20.4 տոկոսով: Կարելի է սպասել, որ արտահանման աճի տեմպը նույնպես կնվազի տարվա ընթացքում, քանի որ նախորդ տարվա աճի տեմպն ուներ արագացման միտում:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %




Ներմուծման աճը փոքր դրական է: 2020թ. հունվարին ներմուծման աճը կազմել է 2.2 տոկոս: Հատկանշական է, որ նախորդ տարվա 10.8 տոկոս ներմուծման մոտ 7.8 տոկոսային կետը պայմանավորված էր տրանսպորտային միջոցների ներմուծմամբ, իսկ տնտեսության համար ավելի կարևոր՝ սարքավորումների ներմուծումը նվազել էր 7.6 տոկոսով՝ ներմուծմանը ունենալով բացասական՝ -1.4 տոկոսային կետ նպաստում: Այս տարի ավտոմեքենաների ներմուծումը նվազելու է և ունենալու է բացասական նպաստում: Հետևաբար, ներմուծման աճը 2020-ին կլինի ցածր:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ



2020թ. հունվարին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 8.6 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.8 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 4.5, 2.1 և 4.4 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը 2020թ. հունվարին կազմել է 183,030 դրամ, ընդ որում պետական հատվածում՝ 155,407 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 196,503 դրամ:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)





2020 թվականի հունվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.4 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 4.4 տոկոսով, իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 5.8 տոկոսով:

Դրամի արժևորումը նույնպես կապվում է մեքենաների ներմուծման աճի հետ, քանի որ դրանց զգալի մասը վաճառվել է ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիներին՝ հանգեցնելով արտարժույթի ներհոսքի աճի: Ավելի մեծ չափով արժևորում թույլ չտալու համար ԿԲ-ն այս տարվա հունվարին շարունակել է բաց շուկայական գործառնությունների միջոցով գնել արտարժույթ:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտներն աճել են մոտ 34.7%-ով: 2020 թվականի հունվար ամսին ընդհանուր պետական եկամուտներն աճել են 34.7 տոկոսով՝ կազմելով 151.3 մլրդ դրամ: Այդ թվում հարկերը և տուրքերը աճել են մոտ 44.0 տոկոսով՝ կազմելով 146.7 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճով: Հետևաբար, քիչ հավանական է, որ հարկային եկամուտների տպավորիչ աճը փետրվար ամսին նույնպես շարունակվի:

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի ցուցանիշները զգալի բարելավվել են 2020-ին: Այսպես, ընդհանուր ծախսերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 34.4 տոկոսով՝ կազմելով 81.2 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերն աճել են 22.2 տոկոսով՝ կազմելով 73.7 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 7.5 մլրդ դրամով՝ կազմելով 7.6 մլրդ դրամ (2019-ի հունվարին կապիտալ ծախսերը կազմել էին ընդամենը 0.1 մլրդ դրամ):

Կապիտալ ծախսերի ծավալը հունվար ամսվա համար բավական տպավորիչ է, քանի որ նախորդ տարի հունվար-ապրիլ ամիսների կապիտալ ծախսերը կազմել էին 7.8 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվարին պետական բյուջեն նախորդ տարվա նման հավելուրդային է եղել: Քանի որ պետական բյուջեի եկամուտները զգալի չափով գերազանցել են ծախսերը, ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ մոտ 70.1 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա հավելուրդից մեծ է 35.1 տոկոսով: Նման իրավիճակը պայմանավորված է պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների սխալ պլանավորմամբ: Այսինքն՝ կա՛մ սխալ է կանխատեսվել հարկերի աճը, այդ պատճառով դրանց համապատասխան ծախսեր չեն նախատեսվել, կա՛մ սխալ են պլանավորվել ծախսերի եռամսյակային և ամսական բաշխումները, և դրանք չեն համապատասխանում եկամուտներին: Երկու դեպքում էլ երևույթը խնդրահարույց է, քանի որ նախորդ տարվա նման, տնտեսությունից հավաքագրվում են ֆինանսական միջոցները և չեն ծախսվում: Կառավարությունը պետք է ուսումնասիրի և բացահայտի անհամապատասխանությունների պատճառները, դրանք վերացնելու և ավելի արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու համար:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2020թ. հունվարի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,857.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 458.2 մլն դոլարով կամ 7.2 տոկոսով: Նախորդ ամսվա (2019թ. դեկտեմբերի վերջի) նկատմամբ կառավարության պարտքն աճել է 23.0 մլն ԱՄՆ դոլարով (0.3%-ով): Ընդ որում, ներքին պարտքն աճել է 55.1 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքը նվազել է 32.1 մլն դոլարով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %




Գնաճն ավելի է հեռացել ԿԲ թիրախից: 2019թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն երկու անգամ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն

5.5%-ի: Սակայն, ԿԲ-ի խթանող քաղաքականությունը բավարար չի եղել գնաճը թիրախին մոտեցնելու համար: 2020-ին 12-ամսյա գնաճն ավելի է նվազել՝ հունվարին կազմելով 0.2 տոկոս: Արդեն բազմիցս նշել ենք, որ չափազանց ցածր գնաճը բացասական երևույթ է տնտեսության համար և խոսում է տնտեսությունում ցածր ամբողջական պահանջարկի մասին:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %




2020թ. հունվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2020թ. հունվարի նկատմամբ կազմել է 15.8 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը մոտ 2.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2020թ., տոկոսային կետ



2020թ. հունվար ամսին ավանդների աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները, որոնք 2019թ. հունվարի համեմատ աճել են 28.4 տոկոսով և ավանդների աճին նպաստել են 7.1 տոկոսային կետով: Ավանդների աճին նպաստել են նաև տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 6.3 տոկոսային կետով և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ 1.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 17.7 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 7.2 տոկոսային կետով (աճը՝ 30.1%):

Վարկերի աճին նպաստել են նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 41.1%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 22.2%)՝ համապատասխանաբար 3.6 և 4.0 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը շարունակել է նվազել 6.5%-ով՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -1.2 տոկոսային կետով: Վերջինս պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների կրճատմամբ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2020թ. հունվարին գրանցված բարձր ցուցանիշները հիմնականում պայմանավորված են բազային էֆեկտով: Մասնավորապես՝ նախորդ տարվա հունվարին արդյունաբերությունը նվազել էր 1.2 տոկոսով՝

պայմանավորված հանքարդյունաբերության նվազմամբ, իսկ 2020թ. հունվարին հանքարդյունաբերության վերականգնմամբ պայմանավորված արդյունաբերության աճը կազմել է 13.4 տոկոս: Սակայն, տարվա ընթացքում բազային էֆեկտը այլևս մեծ դեր չի ունենա, և աճի տեմպերը կարող է դանդաղեն:

2. **Նմանօրինակ իրավիճակ է նաև արտահանման ցուցանիշների դեպքում:** Հանքարդյունաբերության վերականգնումը արագացրել է ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման աճերը: Նախորդ տարվա 16.3 տոկոս անկման դիմաց ընթացիկ տարվա հունվարին գրանցվել է 20.4 տոկոս արտահանման աճ, ինչը նույնպես ժամանակավոր է, և տարվա ընթացքում կնվազի:

3. **Չնայած արդյունաբերության բարձր աճին՝ ՏԱՑ-ին ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը:** 2020թ. հունվարի ծառայությունների կառուցվածքը դեռևս չի հրապարակվել, սակայն աճի տեմպից կարող ենք ենթադրել, որ այն առանձնապես չի փոխվել՝ շարունակելով վատթարացնել տնտեսության կառուցվածքը:

4. **2020թ. շարունակվել են բնակչությանը տրվող վարկերի խնդրահարույց զարգացումները:** Սպառողական վարկերի աճը կազմել է 30.1%: Հիպոթեքային վարկերն աճել են 41.1%: Սակայն, ինչպես նախկինում, բնակչության եկամուտները նույն չափով չեն աճում, հետևաբար նման իրավիճակը հետագայում կարող է առաջացնել լուրջ ռիսկեր՝ վարկերի մարման հնարավորությունների և ֆինանսական կայունության տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: